

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Տվյալ շինարարության կազմակերպման նախագիծը մշակված է ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Արարատյան փողոցի թիվ 1 շենքի տանիքի վերանորոգման աշխատանքների համար:

Մինչ տանիքի վերանորոգման աշխատանքների սկսելը, պետք է անցկացվի անհրաժեշտ կազմակերպչական և տեխնիկական նախապատրաստական աշխատանքներ, որի կազմը և փուլերը ընդունված են ՇՆԼԿ 3.01.01-85 թ. «Շինարարության արտադրության կազմակերպում» ձեռնարկին համապատասխան:

Տանիքի վերանորոգման աշխատանքների ամբողջ համալիրը բաժանվում է 2 ժամանակահատվածների (փուլերի)։

1. Նախապատրաստական փուլ, որի ընթացքում ծրագրվում է՝

*Շինարարական հրապարակի ժամանակավոր պարսպապատման իրականացում:

*ժամանակավոր շինությունների տեղադրում, որոնք նախատեսված են ապահովվելու սանիտարա - կենցաղային կարիքները:

*Տարածքի առանձնացում՝ որպես շին. նյութերի պահեստավորման բաց տարածքներ :

* Մեխանիզմների, ամբարձիչ-տրանսպորտային միջոցների և գործիքների առաքումը:

* Տարածքի լուսավորման ապահովում :

2 . Վերանորոգման աշխատանքների իրականացման փուլ:

Ծանոթություն՝

Շինարարական աշխատանքները իրականացնելիս խիստ պահպանել աշխատանքների իրականացման անվտանգության կանոնները:

Շինարարական աշխատանքները սկսել՝ շինարարական կազմակերպության կողմից աշխատանքների իրականացման նախագծի մշակումից և շինարարներին անվտանգության կանոններին ծանոթացումից հետո:

Մինչ կտուրի վերանորոգման աշխատանքների սկսելը , ստուգել կտուրի կրող կոնստրուկցիաների և մետաղական բազրիքի ամրությունը:

Կազմեց՝

Կ. ՍԵՐՈԲՅԱՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՐՑԵՐ և ՀԱՎԱՅՐԴԵՀԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հակահրդեհային անվտանգությունը շին հրապարակում, աշխատանքի տեղամասերում և աշխատատեղերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան պահանջների «Հակահրդեհային անվտանգության կանոններ» շին. մոնտաժային աշխատանքների իրականացման համար և «Հակահրդեհային անվտանգության կանոններ» եռակցման և այլ աշխատանքների իրականացման համար հաստատված Պետստանդարտ 12.1.004-76-ի կողմից:

Եներգիայի անվտանգությունը շին հրապարակում, աշխատանքի տեղամասերում և աշխատատեղերում անհրաժեշտ է ապահովել համապատասխան պահանջների Պետստանդարտ 12.1.013-78-ի կողմից:

Շին հրապարակը, աշխատանքի տեղամասերը, աշխատատեղեհո և անցումները օրվա մութ ժամանակ պետք է լուսավորված լինեն համապատասխանաբար Հրահանգի՝ շին. հրապարակի էլեկտրոլուսավորման նախագծի: Լուսավորումը պետք է լինի հավասարաչափ և լուսավորող սարքավորումների ազդեցությունը լինի ոչ կուրացնող: Չլուսավորված տեղերում աշխատանքի իրականացումը արգելվում է:

Մինչ աշխատանքի սկսելը աշխատողներին պետք է ծանոթացնել անվտանգության տեխնիկայի կանոնների հետ:

Աշխատանքի ժամանակ մեխանիզմներից և սարքավորումներից օգտվելիս հետևել օգտագործման հրահանգին:

Մեխանիզմների աշխատանքը ստուգել գործարկումից առաջ պարապ վիճակում:

Մեխանիզմների մաքրումը, յուղումը, նորոգումը և բացումը գործարկման ժամանակ արգելվում է: Արգելվում է ինչպես նաև անսարք վիճակում աշխատացնել:

Մինչ կտուրի նորոգման աշխատանքների սկսելը՝ անհրաժեշտ է ստուգել և ճշտել կրող կոնցտրուկցիայի և մետաղական սահմանափակող ցանցերի ամրությունը:

Կտուրի աշխատանքների իրականացման և այն տեղերում, որտեղ չկա մետաղական սահմանափակող ցանցեր՝ ապահովել աշխատողի անվտանգությունը պահպանիչ գոտիներով, որոնք պետք է ամրացնել կոնստրուկցիայի ճշտված ու հուսալի էլեմենտից:

Կտուրի աշխատանքները իրականացնող աշխատողի անվտանգ շարժումը ապահովելու և ոտքի հենելու համար՝ անհրաժեշտ է կառուցել 0.3մ-ից ոչ պակաս լայնությամբ փոխուղղահայաց կանգնակներից անցումներ, որոնք պետք է ամրացված լինեն:

Կտուրի աշխատանքները չի թույլատրվում իրականացնել սառեցման, մշուշի, անձրևի և ամպրոպի, ուժեղ քամու՝ 15մ/վ և ավելի արագության ժամանակ:

Կտուրի վերանորոգման աշխատանքների իրականացման ժամանակ հետևել և պահպանել վտանգավոր գոտիներում աշխատողների և շրջապատի անվտանգությունը

Առարկայի անկման վտանգավոր գոտի շենքի պարագծից -- 5.0 մ:

Կռունկի տեղափոխվող բեռի հնարավոր անկման վտանգավոր գոտիկռունկի սահմանափակ աշխատանքային գոտուց -- 7.0մ:

Մուտքերի վրա կառուցել գլխածածկույթ ալիքավոր թիթեղից -- 3.0մ x 5.0մ:

Շին մոնտաժային աշխատանքները թույլատրվում է իրականացնել միայն աշխատանքների արտադրության նախագծի ծանոթացումից հետո՝ որում պետք է մշակված լինի անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային բոլոր միջոցառումները: Այդ նախագիծը պետք է համաձայնեցնել շին. կազմակերպության անվտանգության տեխնիկայի ծառայությունների հետ:

Ժամանակացույց

ՀՀ Արարատի մարզ Արտաշատ քաղաքի Արարատյան փողոցի թիվ 1 տանիքի վերանորոգման աշխատանքների տևողությունը որոշված է ելնելով մակերեսից և աշխատատարությունից:

Վերանորոգվող մակերես ` 915 .0 քառ.մ

Աշխատատարությունը` 2317 մ/ժամ

Աշխատողներ ` -- 9 մարդ,

որից` ԻՏԱ -- 2 մարդ,

պահակ -- 1 մարդ,

շինարար -- 6 մարդ,

$$S = \frac{2317}{8.0 \times 6} = 48 \text{ օր:}$$

Շինարարների թիվը` 6 մարդ:

որից` բանվոր -- 2 մարդ,

ատաղձագործ -- 2 մարդ,

տանիքագործ -- 2 մարդ:

Օգտագործվող համապատասխան ուղղման գորխակիցները `

$$S = 48 \times 1.1 \times 1.15 \times 1.2 = 73 \text{ օր} + 10 \text{ օր} = 83 \text{ օր}$$

Նախապատրաստական փուլ - 10 օր

Վերանորոգման աշխատանքների փուլ - 73 օր

Կազմեց`

Կ. ՍԵՐՈԲՅԱՆ

ՑԱՆԿ

շինարարության համար անհրաժեշտ հիմնական
շինարարական մեքենքների, մեխանիզմների և սարքավորումների

N/N	Անվանում	Մակնիշ	Չափ	Քանակ
1	2	3	4	5
1	Ավտոկռան	ԿԱ-5473	հատ	1
2	Բեռնատար մեքենա	ԿԱՄԱԶ-55111	հատ	1

Կազմեց՝

Կ. ՍԵՐՈԲՅԱՆ